

Ե. ԶԷՐՔԷՋԵԱՆՑԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Յընթացս քանի ամաց երևեցան յազգիս Հայոց տպագրութիւնք ոմանք ազատամիտք և աղանդաւորք հակառակք դաւանութեան մերս լուսաւորչադաւան եկեղեցւոյ Հայաստանեայց. հրատարակող այդպիսի մոլար վարդապետութեանց հանդիսանայ 'ի մէջ ազգիս Ստեփաննոս ոմն Նազարեանց՝ վարդապետն Արեւելեան լեզուագիտութեան առձայնեալ, որ զլուսերին աղանդ յայանապէս իմի ջնայ տարածանել տպագրութեամբ 'ի միջի Ժողովրդեան մերոյ, առ 'ի զազգն համօրէն եթէ մարթ ինչ իցէ 'ի նոյն խմորել, բանդի 'ի նորայն վարդապետարանի կրօնի, յէջ ԾՅ ասի աւանիկ թէ Վերստոնէութեան հիմնադիրն կարգել է երկու խորհուրդ՝ մկրտութիւն և հաղորդութիւն, սոյլին օրինական ինքնակամ և ազատօրէն կրճատեալ զսրբազան խորհուրդս, զորս Հայաստանեայցս ամենամաքուր եկեղեցի ուսուցանէ լինել եօթն, զմնացեալ հինգ խորհուրդս, զորս ոչ համարի Քրիստոսագիր, վայր 'ի վերոյ և զառ յերկուց վերոյգրելոցն՝ մեկնաբանէ ըստ իւրոց բմաց 'ի հետեւեալ էջսն, և կոչէ զնոսին ոչ թէ խորհուրդս այլ կամ կամաւոր արարողութիւնս և կամ խորհրդաւոր կապակցութիւն, որպիսի ասէ լինել զպսակն, զոր և բարոզէ խղիւղի, եթէ շարունակութիւն նորին այլ ևս անկարելի լինիցի վասն ամուսնոց. իսկ տպաշխարութեան խորհուրդ ամենեկին 'ի բաց բարձեալ տեսանի 'ի թուոյ սուրբ խորհրդոց, զի ոչ ուրեք յիշատակի. գտանին այլ ևս յոգնահամար սխալանք և հակաճառութիւնք 'ի վարդապետարանի անդ կրօնի Ստեփաննոսի Նազարեանց ընդդէմ ընդհանուր քրիստոնէական և մասնաւորապէս մերոյ Հայկազեան եկեղեցւոյ Աստուածաբանութեան, զորս մի առ մի հերքելով 'ի տիպ արձանացոյց հարազատ և գիտնական համազգին մեր Առաքել Արարատեան 'ի Տփլիս ի 1858 ամի յառանձին գիրս, որ կոչի Վսխալանք վարդապետարանին կրօնի Ստեփաննոսի Նազարեանց 'ի զգուշութիւն համազգեացաւ: Նոյն Նազարեանց

վարդապետն անուանեալ ի Հիւսիսափայլ օրագրի իւրում 'ի տասներորդ ամսատետրակի այսր 1860 ամի, յէջսն 312, 313, արդէն բացարձակապէս և անվեհեր իմն գրէ, «Հայոց եկեղեցին պիտոյ էր նորոգել իւր հնացած մաշուած կենդանութիւնը միտ դնելով յառաջագէտ մարդկութեան պիտոյքներին, Հայոց եկեղեցին պիտոյ էր մ'ի ընթորմ առնէր ոտքից մինչև գլուխ այսինքն մի ազդու վերանորոգութիւն աւետարանի հաստատման հիման, 'ի հարկէ ներգործելով արմատից դէպ ի վեր... Հայոց եկեղեցին գիտութեամբ պայծառանալով, ժողովուրդը ճանաչելով քրիստոնէութեան իսկութիւնը, շինուելով և հաստատուելով աւետարանի բանի վերայ այնուհետև ոչ մի հոյ տեղիք ունենալու չէր վաղելու իւր եկեղեցուց դէպի միւս եկեղեցի ըստ որում նոյն երանութիւնը, որ խնդրում է նա օտարի եկեղեցւոյ մէջ, ունի իւր մայրենականի մէջ. ի մոլորաշաւիղ բանիցս յայտնանէ դիւրաւ իմն կարէ եղրակացուցանել ամենայն ոք, նախ՝ թէ Հայաստանեայց մերս եկեղեցի չէ ամենևին հիմեալ ուրեմն ի վերայ Աւետարանական բանի. երկրորդ՝ թէ յայդպիսի պատճառաց շարժեալ պարտէ մեզ նորոգել, այս է փոփոխել գլխովին զեկեղեցական արարողութիւնս, զծէսս և զդաւանութիւն մեր. աւելորդ իմն վարկանիմ մաաչիլ աստանօր ի զնինն անհամար փնասուց որ կարէին յառաջանալ (թո՛ղ զի մասամբ ինչ և ուրեք ուրեք նշմարին իսկ արդէն) վասն Հայկազնեայ ժողովրդեանս յընթերցանութեանէ անտի հաւատընդդէմ և ազգընդդէմ գրութեանց, զայն օ՛ն անդր քան զմերս իմացուած զօրէ իմաստասիրել սրբազան ժողով Աստուածաշնորհ հարց մերոց ի լուսաւորչականդ սինհոդոսի: Զասացելոցս ճշմարտութիւն ապացուցին արդէն որմանք ի Հայկազնէից, որք յարեան ի տեղիս տեղիս ձեռն արկին հերքել և մերժել զծանրալուր և զպժգալի առաջարկութիւնն, որ յաղագս վերանորոգութեան (ընթորմի) եկեղեցւոյ մերոյ: Այսպիսի եղև Մուրադեանն գիտնական և համազգի հարազատն ազգիս, զորոյ զխոհական և զօրաւոր պատասխանի ընթերցաբ 'ի 10 համարի Վոնիկան Հայաստանի, և ես յետինս և նուաստագոյնս 'ի ժողովրդենէ մերմէ, քանզի մի եմ յորդուց Հայաստանեայց եկեղեցւոյ, որ վշտացեալ 'ի սիրտ և 'ի հոգի յընթեռնուն իմն զվերոյիշեալ

սանձարձակ ընդդիմաճառութիւնս 'ի դէմ անսխալ դաւանութեան Գրիստոսահիմն և Առաքելաքարոյ եկեղեցւոյ մերոյ և զնոյն եկեղեցի մեր զսուրբն և զամենամաքուն յանտանելի նախառինս տեսեալ և 'ի մեծի վտանգի, հարկ անձին վարկայ հերքել տպագրութեամբ զհաւատընդդէմ գրուածս Ստեփաննոսի նազարեանց և զյօդուածս իմոյն հերքմանց ի լոյս ընծայեցի նախ 'ի 13 համարն Մեղուին Հայաստանի և ապա 9 համարն Ճռաքաղի, բայց զի համոզանք և խրատաբանութիւնք մասնաւոր անձանց ոչ զօրենս 'ի բաց բառնալ զլիսովին զճապաղեալն ամենուրեք զազգակործան մոլորութիւնն և բարձրագունի իմն պէտք են իշխանութեան առ 'ի պաշտպանութիւն հաւատոյս, այսր աղագաւ բացատրելով զայս ամենայն ամենահպատակաբար խնդրեմ, զի հրամայեսցի քննել նախ զամենայն վերոյիշեալ և զայլ իսկ գրուածս Ստեփաննոսի նազարեանց զհաւատոց մերոց, որպիսի իմն է և հանդէս նոր հայախօսութեան անուանեալ գիրքն, յորոյ երկրորդում մասին բերի պատճառն կրճատելոյ լուսերին զխորհրդոց եռեռնաթիւ և ճշմարիտ իցեն ինչ բանքն ամենայն, մատչիլ ապաքէն 'ի նորոգութիւն նկատած և մաշուած կենդանութեան եկեղեցւոյս, որպիսի իմն է բարոյութիւն վասն եկեղեցւոյ մերոյ 'ի հայազգի լուսեռախոհ իմաստակէ ումեմնէ, իսկ եթէ ընդհակառակն սուտ են և մոլար վարդապետութիւնք նորա (որպէս և են իսկ) եթէ եկեղեցին մեր հիմնեալ է 'ի վերայ աւետարանական ճշմարտութեանց, եթէ կենդանութիւն նորա չէ ինչ մաշեալ և հնացեալ, եթէ գոյ 'ի սմա երանութիւն վասն հոգւոց մերոց և հետեաբար չեն ինչ պէտք ոչ միայն արմատական վերանորոգութեան յոտից մինչև ցգլուխ, այլ և ոչ իսկ ամենափոքր սյլսյլութեան 'ի հաւատալիսն մեր, առնել ապաքէն զբարձրագոյն անօրէնութիւն առ ի փութով ժողովել զամենայն օրինակըս 10 համարին Հիւսիսափայլ օրագրի այսր 1860 ամի և զամենայն հատորս վարդապետարանին կրօնի վերոյիշեալ Ստեփաննոսի նազարեանց և հոյ ճարակ տուեալ զայնս՝ արգելուլ առ յապայն զտպագրութիւն Հիւսիսափայլ օրագրի և զորոյ և իցէ մատենի, յորում լինիցին բանք զհաւատոյ Հայաստանեայց մերս եկեղեցւոյ առանց նախադնին տեսու-

Թեան և հրամանի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և լուսաւոր-
չական սրբազան սիւնհոգոսին:

26 Դեկտեմբերի 1860 ամի.

Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱԽԱԿԸ ՄԱՏԹԻՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ:

Մինչ փոխարէն մերոյ զցայգ և զցերեկ գրաւոր աշ-
խատութեանց յօգուտ ազգի առ 'ի վեհափառ գլխոյդ յու-
սայաք հանդիպիլ բանից քաջալերութեան և գովութեան, և
ահա ժամանեաց առ մեզ արձակեալն յանցելոյ նոյեմբերի
26 թուականէ կոնդակ Ձեր տհաճութեան սոսկ և եթ, որ-
պէսզի Հիւսիսափայլ օրագիր մեր ախորժելով և նկատմամբ
խնդրիցէ երգիծանել զազգն թէ զաշխարհականս և թէ զհո-
գեւորս. խռովիմք և ոչ, զի ոչ ստգտանէ զմեզ խիղճ մեր,
գուցէ մասնաւոր ոմանք յաշխարհականաց և 'ի հոգեւորաց
մերոց ամբաստանեալ իցեն զանաչառ ազատախօսութենէ Հիւ-
սիսափայլի, որով մերկացուցեալ էին 'ի հրապարակի նոցայն
գործք արատաւորք և վնասակարք ազգին, բայց դոքա չեն
ազգն և նոցուն բարեմիտք 'ի հասարակի, այլ առանձնականք
ոմանք վարակեալք անձնական ախտիւք թշնամութեան
և նախանձու. որովք և զտգէտն ամբոխ վարակել ջա-
նան և յարուցանել ընդդէմ մեր. ո՛չ վեհափառ Տէր,
ազգն հաճ և հաւան է ընդ գնացս Հիւսիսափայլի.
և գրագէտքն 'ի նոսին բազում հեշտութեամբ ըն-
թերցասիրեն զայն, դոքին իսկ ամս երիս ահա արծաթով
իւրեանց պահպանեալ են զհրատարակութիւն Հիւսիսափայլի
և աղաչեն զմեզ յառաջ տանել զայն և պսոսհետեւ Եւսմ
անմարթ էր լինել այսպէս, եթէ բարեմիտ հասարակութիւնն
գտանէր յիմում օրագրի 'ի վնասակարացն ինչ իւրուան օգ-
տի և լուսաւորութեան յաւուրս մեր: Եւ ոչ ամբաստանեմ